ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2025թ. թիվ 555-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի ԹԻՎ 555-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով հաստատված «Պետական ուսումնական հաստատության» կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգի 5-րդ կետի 2)-րդ ենթակետը և 10-րդ կետը, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ուսումնական հաստատությունների միասնական խորհրդի նախագահի փոխարինողի 19.09.2025թ. դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2024 թվականի օգոստոսի 15-ի «ՀՀ Լոռու մարզային ենթակայության պետական ուսումնական հաստատությունների միասնական խորհուրդների կազմերը հաստատելու և ՀՀ Լոռու մարզպետի 2021 թվականի մայիսի 10-ի թիվ 231-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 555-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը՝

«25. «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ, «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի Սուրբ Գրիգոր Լուսավորչի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ, «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ, «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի Վ.Թեքեյանի անվան թիվ 6 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ, «ՀՀ Լոռու մարզի Ուրասարի հիմնական դպրոց» ՊՈԱԿ, «ՀՀ Լոռու մարզի Կաթնաղբյուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ և «ՀՀ Լոռու մարզի Արմանիսի հիմնական դպրոց» ՊՈԱԿ» մասում «Սահակյան Ալիկ» բառերը փոխարինել «Նահապետյան Մարինե» բառերով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 26
ք.Վանաձոր